ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
N ՀՀ ԿԱ Ո-ԲԸԾՁԲ-2015/Է/ՃՈ/2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

<< 19 >> 10 2017թ.

ք. Երևան

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼԻԿԱՆՏԵ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բաբինյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 11.11.2015թ.-ին կնքված N N ՀՀ ԿԱ Ո-ԲԸԾՁԲ-2015/Է/ՃՈ/2 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը և վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան ՀՀ ԿԱ Ո-ԲԸԾՁԲ-2015/Է/ՃՈ/2 ծածկագրով գնման Պայմանագրի 2017 թվականին կնքված 3-րդ համաձայնագիրը նվազեցնել ևս մեկ անգամ՝ 4 900 000 (չորս միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	<<Ալիկանտե>> ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Լեփսուսի 4շ., բն.9
ՀՀ Ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1570012604290100
Հ/Հ 900013150041	ՀՎՀՀ 01014536
ՀՎՀՀ 01840082	էլ. հասցեն՝ alikante60@mail.ru
հեռ. 59-61-52	Հեռ. (096)030406
էլ. փոստ: police-gnumner@rambler.ru	
Ա. Համբարյան	Ա. Բաբինյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	/տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ